ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/156/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **14 հուլիսի 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հուլիսի 14-ին, քննության առնելով «Արժանապատիվ ապագա» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) նախագահ՝ Արմեն Դարբինյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.10-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/156/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 28.1-ին հոդվածի 1-ին, 2-

րդ, 4-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին տվյալներն (այսուհետ՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստր) օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովը, 2025 թվականի մայիսի 16-ի թիվ 01/2031/10-2025 գրությամբ, Կուսակցությանը ծանուցել է հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տեղեկությունները եռօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու վերաբերյալ: Միաժամանակ տեղեկացվել է, որ նույն ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել նաև Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի այն անդամների վերաբերյալ համապատասխան ռեեստրները, ովքեր 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանդիսացել են Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձ:

Նույն գրությամբ Կուսակցության նախագահ Արմեն Դարբինյանը ծանուցվել է, որ վերոնշյալ տեղեկությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:30-ին, հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով արձանագրություն կազմելու համար, իսկ 10-րդ աշխատանքային օրը՝ ժամը 16:30-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Նշված փոստային ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2025 թվականի հունիսի 20-ին *չպահանջված* նշումով (հիմք՝ LO127932375AM փոստային հետադարձ առաքանին, ետ վերադարձ՝ CN 15):

1.3 2025 թվականի հունիսի 10-ին նշված ծանուցումը՝ N 01/2415-2025 գրությամբ, ուղարկվել է Երևանի քաղաքապետին և միաժամանակ տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում:

1.4 2025 թվականի հունիսի 23-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Արմեն Դարբինյանի բացակայությամբ կազմվել է թիվ 109/25 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արմեն Դարբինյանի բացակայությամբ 2025 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից դիրքորոշում և պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/156/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ 2003 թվականի դեկտեմբերի 3-ից Կուսակցության նախագահ է հանդիսանում Արմեն Դարբինյանը, սակայն ըստ **Կուսակցության հայտնած տեղեկատվության՝ արձանագրվել է, որ 2024 թվականի մարտի 13-ի համագումարով նախագահ է ընտրվել Ստեփան Ծաղիկյանը:**

3.2 Կուսակցությունը Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 16-ի թիվ 01/2031/10-2025 գրությամբ պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով:

3.3 Գործի քննության օրվա դրությամբ պահանջված տեղեկատվությունը Կուսակցության նախագահի կողմից Հանձնաժողով չի ներկայացվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.2 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 **Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:**

4.4 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև (...) ռեեստրները.

4.5 Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթն է հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը:

4.6 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատամամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարույթի ընթացքում պարզվել է, որ իրավախախտման ենթադրյալ գործողությունները կամ անգործությունը վերագրվել են ածի, ով փաստացի չի հանդիսացել համապաստախան պաշտոնը և դրանից բխող պարտականությունը կրող անձ, հետևաբար նա չի կարող պատասխանատվության ենթարկվել տվյալ իրավախախտման համար: Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համատեքստում, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Հաշվի առնելով վերը նշվածը վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է կարճել գործի վարույթը, երբ պարզվում է, որ վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը բացակայում է: Վերոնշյալ հոդվածով նախատեսված նորմը նպատակ ունի կանխել անձի

նկատմամբ անհիմն վարչական պատասխանատվության կիրառումը և ապահովել օրինականության և համաչափության սկզբունքների պահպանումը վարչական վարույթի շրջանակում: Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից թիվ ՎԻՎ/109/25 իրականացված վարույթի շրջանակում «Արժանապատիվ ապագա» կուսակցության նախագահ Ստեփան Ծաղիկյանի հաղորդմամբ պարզվել է, որ 2024 թվականի մարտի 13-ից Արմեն Դարբինյանն այլևս չի հանդիսանում Կուսակցության նախագահ, հերթական՝ 2024 թվականի մարտի 13-ի համագումարում Կուսակցության նախագահ է ընտրվել Ստեփան Ծաղիկյանը, հետևապես Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ այլևս չի հանդիսանում Արմեն Դարբինյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետում նշված անհամապատասխանության մասով վարչական վարույթն ենթակա է կարճման՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածով, Օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ կետով և Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի մայիսի 16-ին հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՎԻՎ/156/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Դարբինյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ